

Թոսգանայի մեծ Դուքսն է (Gran Duca di Toscana), որովհետեւ ժե. դարուն Ջուզայեցի վանառականները գլխաւորաբար Լիվոռնոյի (Թոսգանա) եւ վենետիկի նաւահանգիստները կը գործածէին, որպէս գլխաւոր կայաններ իրենց ապրանքներուն (1) :

Ստորեւ կը հրատարակենք Յակոբ Կաթողիկոսին այս նամակը .

*«Քիւ պսակեալ իշխանաց իշխանիդ Գրանդուկէ*

Յի Քի Ծառայ Յակոբ Կաթողիկոս Ամենայն Հայոց, եւ Պատրիարք Վաղարշապատու լուսակար եւ քսանկար երկնահանդէտ եւ աղինասարաս, որով քէապար եւ քրովբէաճեմ Սրբոյ Աթոռոյն էջմիածնի. Յորմէ ժամանեալ հասցէ գիր անութե եւ նամակ պահպանութե, շնորհք առաքելական եւ ածային բաղմապատիկ անութիւնն ի վերայ արքայամեծար եւ բարձրատոհմ, իշխանաշուք եւ մեծապատիւ, ածասէր եւ ածապահ, աջով Ամենակալին զօրացեալ եւ նորին շնորհօքն պահպանեալ, ամենիմաստ եւ հանճարեղ, չառաւիղ բարերնձիւղ եւ պահող պատուիրանացն Այ :

Որով ցնծալ քեզ յարազուարճ բերկրանօք վարդափրթիթ զաւակօք, եւ աղատադունդ մերձաւորօք, սիրելեօք եւ բարեկամօք, բոլոր զօրօք եւ համայն ազգօք, կալ մնալ անփորձ յամ չարեաց ի յոյսն ամենեցուն : Շնորհք ընդ

---

(1) Archivio di Prop. Fide, Cong. Arm. vol. 1, ff. 30-31.